Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
հունիսի 22 -ի N 766 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՋՈՐՔԵՐԻ ՋՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՋՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են տնտեսության, զինված ուժերի և այլ զորքերի զորահավաքային ծրագրերի իրականացման գործընթացում զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների (այսուհետ՝ զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպություններ)՝ բյուջետային ֆինանսավորման գործիքներով պետական աջակցության հետ կապված հարաբերությունները:

2. Բյուջետային ֆինանսավորման գործիքներով պետական աջակցություն ստանալու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

3. Զորահավաքային ծրագրերի իրականացման պետական աջակցությունը կարող է իրականացվել հետևյալ ուղղություններով՝

1) ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի փոխհատուցում.

2) ապրանքների ներմուծման ժամանակ հաշվարկված ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, մաքսատուրքի և մաքսավճարի փոխհատուցում.

3) գործող և զորահավաքային առաջադրանքների կատարման համար, սակայն խաղաղ ժամանակաշրջանում չօգտագործվող զորահավաքային նշանակության շինություն-ների ու փոխադրամիջոցների համար հաշվարկված գույքահարկի փոխհատուցում.

4) զորահավաքային առաջադրանքների կատարումն ապահովելու համար ներգրավ-ված վարկային միջոցների փոխհատուցում՝ վարկային միջոցների սպասարկման բանկային տոկոսադրույքի չափով:

4. Զորահավաքային ծրագրերի իրականացման պետական աջակցության ձևը և չափը սահմանվում են զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և ոլորտը համակարգող շահագրգիռ պետական մարմնի միջև կնքվող զորահավաքային առաջադրանքների կատար-ման վերաբերյալ պայմանագրում:

5. Պայմանագրերի կնքման բանակցային գործընթացներին ներգրավվում է նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ զորահավաքային ծրա-գրերի իրականացման պետական աջակցության ձևի և չափի սահմանման մասով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ